ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

25.06.2019թ.
Ժամը 10:30

Հանձնաժողովի անդամներ՝ Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյան
Ռոմելա Հարությունյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2.1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 18.06.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<**Գապէքս**>> **ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի <<**Գապէքս**>> **ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ուներ 1829800 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ:

<<**Գապէքս**>> **ՍՊԸ-ն** ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 48-րդ կետով 1-ին ենթաակետի <<ա>> պարբերության համաձայն 19.06.2019թ-ին ներկայացրել է N 3417, N3416, N3419, N3415, N3418, N3428, N3429 վճարման հանձնարարականների բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակները և 24.06.2019թ-ին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկանքը այն մասին, որ <<**Գապէքս**>> **ՍՊԸ-ն 18.06.2019թ-ի դրությամբ** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ժամկետանց պարտավորություններ չունի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

2.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգին <<**Գապէքս**>> **ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացրել է հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

<<**Գապէքս**>> **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ համապատասխանում է սույն հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին.

4.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝ <<**Գապէքս**>> **ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Լալազարյան

Մ. Առաքելյան

Ա. Մարտիրոսյան

Ռ. Հարությունյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան